ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻ

Ս. Էջմիածնի Սինոդը փետրուարի 16-ին օրագրով որոշեց.

Առաջին. Ամենայն Հայոց նոր Կաթուղիկոսի ընտրութիւնը նշանակել այս 1911 թուի դեկտեմբերի 11-ին.

Երկրորդ. կազմել ծանուցողական Հրովարտակներ և ուղարկել.

ա. Ս. Երուսաղէմի և Կ. Պոլսոյ ամենապատիւ պատրիարքներին, Կ. Պոլսոյ Ազգային Ժողովին, Տանն Կիլիկիոյ Հայոց Վեհաշնորհ Կաթուղիկոսին, Աղթամարայ Հայոց կաթուղիկոսական տեղապահին.

բ. Ռուսաստանի Հայոց թեմական առաջնորդներին— 1, Շամախու, 2, Նոր Նախիջևան—Բեսարաբիայի և 3, Աստրախանի, 4, Երևանի Փոխ—թեմականին, 5, Վրաստանի և 6, Ղարաբաղի Հայոց Կոնսիստորիաների նախագահողներին.

գ. Տաճկաստանի հետևեալ թեմական առաջնորդներին. 1, Թէքիրդաղի, 2, Ադրիանուպոլսի, 3, Վառնայի 4, Մոլդովալախիայի, 5, Տրապիզոնի, 6, Ճանիկի, 7, Շապին—Գարահիսարի (Նիկոպոլ), 8, Ամասիա—Մարզուանի, 9, Եւդոկիայի (Թոխատ), 10, Սեբաստիայի (Սվազ), 11, Կարինի (Էրզերում), 12 Վանայ, 13, Լիմ և Կտուց անապատների, 14, Բասենի (Հասան—Ղալա), 15, Բայազէտի, 16, Մուշի, 17, Բղիի (Ալինջ), 18, Բաղէշի (Բիթլիզ), 19, Դերջանի, 20, Բաբերդի (Բայբուրդ), 21 Երզնկայի, 22, Զնքուշի, 23, Բալուի, 24, Զարսանջակի, 25, Խարբերդի 26, Արաբկերի, 27, Ակնայ, 28, Փեռամախու, 29, Արծնիի, 30, Կեսարիայի, 31, Տիգրանակերտի, 32, Քրդստանի, 33, Եդեսիոյ (Ուրֆա), 34, Բաղդատի, 35, Գաղատիայի (Էնկիւրիա), 36, Զմիւռնիայի (Իզմիր), 37, Եգիպտոս—

Կրետէի. 38. Բանդրմայի. 39. Գուդինայի. 40. Նիկոմեդիայի (Իզմիդ). 41. Խուլիմանից (Զմչկածագ) և 42. Բրուսայի. 43 Թաժզարա – Ացպտերի.

դ. Պարսկաստանի Հայոց առաջնորդներին – 1. Ատրպատականի. 2. Պարսկա–Հնդկաստանի.

Երրորդ. Տաճկաստանի և Պարսկաստանի–Հնդկաստանի Հայոց թեմական առաջնորդների անունով հրովարտակները ուղարկել Կովկասի Փոխարքայի Դիւանատունը, խնդրելով կարգադրել հասցնել ըստ պատկանելոյն, իսկ Ռուսաստանի հայ առաջնորդների հրովարտակները ուղարկել Սինոդից, նոցա անմիջապէս.

Չորրորդ. Նոր Կաթուղիկոսի ընտրութեան նշանակուած օրուայ մասին յայտնել Կովկասի Տ. Փոխարքային

— Սինոդի այս որոշումը կատարուեց փետրվարի 23-ին գրութեամբ Փոխարքայի անունով, իսկ նոյն ամսի 25-ին ծանուցողական հրովարտակի առաքման մասին տեղեկութիւն տրուեց Երուսաղէմի և Կ. Պոլսի պատրիարքական Սրբազան Տեղապահներին և Ատրպատականի ու Պարսկա-Հնդկաստանի հայոց առաջնորդներին։

Ահա հրովարտակի պատճէնը.

ԼՈՒՍԱՒՈՐՉԱԿԱՆ.

ՀԱՅՈՑ

ԼԻՆՈՂ Ս ԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

ՄԱՍՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ

Թ. 436—490.

Ի 25 փետր. ՌՑԿ—1911 ամի

Ս. Էջմիածին

(Վենետեցոցի Կաթուղիկոսի Տաճն Կիլիկիոյ, Գեր. Տեղապահի պատրիարքի Հայոց, եւ Գեր. Առաջնորդաց).

ԽՆԴԱԼ Ի ՏԷՐ.

Սրբազնագոյն Հայրապետն մեր և Կաթողիկոսն Ամենայն Հայոց Տ. Տ. ՄԱՏԹԷՈՍ Բ. յետ հնգեամսանամսեայ Հայրապետութեան անքննելի կամօքն Աստուծոյ փոխեցաւ յաստեացս ի 11 Դեկտեմբեր ամսոյ անցեալ 1910 ամի, թողով թափուր զԱթոռ Կաթողիկոսութեան ազգիս և

զՄիաբանական Ուխտ Սրբոյ Աթոռոյս ի վիշտս տրբտմութեան։

Ծանուցեալ զայս զոյժ սգաւորիթ Զերումդ.... և Զեօք համօրէն հոգեւորական դասու և բարեպաշտօն հայազգեաց Տիրախնամ քաղաքաց և գիւղօրէից վիճակիդ՝ Սինոդս Սրբոյ Էջմիածնի հրաւիրէ զՁերդ.... և զՄիաբանական Ուխտ Սրբոյ Եկեղեցւոյ Ձերոյ՝ ուղղել զՁերմագին մաղթանս առ Քահանայապետն յաւիտենից Քրիստոս հանգուցանել ի լոյս երեսաց Իւրոց զհոգի բարեյիշատակ Հայրապետին մերոյ և զմեզ՝ զորբացեալ զաւակունս Մօրն լուսոյ Սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի՝ մխիթարեալ պահպանել օժանդակութեամբ և շնորհօք Ամենազօր Սուրբ Հոգւոյն։

Հնազանդեալ կամաց Ամենախնամ Արարչին՝ յետ ամփոփելոյ Միաբանութեան Աթոռոյս ի հող տապանի զնշխարս հոգելոյս Հայրապետին և զկնի հոգալոյ զարժանն զեղանակէ անասյթաք առաջնութեան ներքին և արտաքին մասանց կառավարութեան Սրբոյ Վանիցս և առաջի ունելով աչաց, զի ընտրութիւն նորոյ Պատրիարք Կաթուղիկոսի ըստ գօրութեան ԲԱՐՁՐԱԳՈՅՆ հաստատեալ կանոնադրութեան պարտի լինել ի լրանալ միոյ ամի յօրէ մահուան Հայրապետին, Սինոդս Սրբոյ Էջմիածնի անօրինեաց հասուցանել ի գիտութիւն Ձերդ.... և Քրիստոսասէր ժողովրդոց, յանձն եղելոց Ձերում Հովուական խնամատարութեան, և յանձն առնել Ձեզ ի ձեռն քաղաքական իշխանութեան տեղւոյդ հրաւիրել զհայազգի ժողովրդականս ըստ սահմանեալ կանոնաց, առանձին ի՝ն ազգասիրական եռանդեամբ, հոգւով մխիթարութեան, բարեպաշտութեան և սիրոյ, ընտրել ի միջոյ իւրեանց զպատգամաւոր մի իբրև զներկայացուցիչ իւրեանց, և զկնի ընտրութեանն հրաւիրել զնա՝ զընտրեալ պատգամաւորն՝ գալ այսր ի Սուրբ Էջմիածին ընդ Ձերումդ.... որ էք ներկայացուցիչ համայն հոգևորական դասու վիճակիդ, և ներկայ գտանել ասա ի Մայր Աթոռս ի 11-դում աւուր Դեկտեմբեր ամսոյ այսր 1911 ամի վասն ընտրելոյ ի հա-

մայն հոգևորականաց Ազգիս ճիշդ պահպանութեամբ ծիսից և սովորութեանց, սահմանելոց առ այս ըստ օրինի, զարժանաւոր յաջորդ Սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի, ի կառավարել զԵկեղեցին Քրիստոսի և զՀայրապետական թափուր մնացեալ Աթոռ Կաթուղիկոսութեան Ամենայն Հայոց, որպէս զի ընտրեալ գլուխն Սրբոյ Եկեղեցւոյ մերոյ վարեսցէ զՀայրապետական իշխանութիւնն յամենայնի ըստ անսասերիւր Աւետարանական վարդապետութեան և կանոնաց Սրբոց Հարց, ի պարծանս լրութեան Ազգիս և ի պայծառութիւն Եկեղեցւոյ մերոյ Սրբոյ։ Եւ եթէ հանդիպիցիք արգելանաց անձամբ ներկայ գտանել ի Սուրբ Էջմիածին ի ժամադրեալն աւուր, յայնժամ բարեհաճեսջիք առաքել ի ժամանակին զներկայացուցիչ Ձեր, զընտրեալն ի Ձէնջ։ Իսկ եթէ ըստ անակնուելի իմիք հանգամանաց և դիպուածոց ոչ յաջողեսցի ոչ հոգևոր ներկայացուցչի Ձերոյ և ոչ աշխարհական պատգամաւորին, ընտրելոյ ի բարեպաշտ հայազգեաց վիճակիդ, անձամբ գտանել ասա ի սուրբ Էջմիածին ի ժամ ընտրութեան ի նշանակեալն աւուր, յայնժամ ունիք Դուք և աշխարհական պատգամաւորն իրաւունս յայտնելոյ զկարծիս Ձեր և զորոշումն առ այն՝ թէ զո՞ ոք յեկեղեցականաց գտանէք արժանաւոր այնմիկ վեհասքանչ Հայրապետական իշխանութեան, առաջարկել կանխաւ Սինոդիս գրաւոր, զի մի արգելցի ընտրութիւնն ի նշանակեալն աւուր։

Ի վերջ բանիցս Սինոդս Սրբոյ Էջմիածնի հանդերձ Ուխտիւ Միաբանութեան Սրբոյ Աթոռոյս, միջնորդութեամբ ամենայն Սրբութեանց, հանգուցելոց ի Տաճարիս, ամենաջերմեռանդն աղօթիւք առ Աստուած հայցէ վասն համայն ազգաց հոգևորականաց և բարեպաշտոն ժողովրդականաց հայազնէից մեծաց և փոքունց, բնակելոց ի վիճակիդ, զերկար կեանս, զյաջողութիւն ամենայն բարենպաստակ գործոց և զբարգաւաճութիւն ամենայն առաքինական ձեռնարկութեանց, պահպանելով զամենեսեան զնոսա ընդ հովանեաւ ամենազօր Աջոյն Իւրոյ անվնաս յամենայն երևելի և աներևոյթ թշնամեաց ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ. ամէն։

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ՏԱՃԿԱՍՏԱՆՈՒՄ

Կ. Պոլսոյ պատրիարքական տեղապահ Տ. Վահրամ արքեպիսկոպոս, ինչպէս հաղորդում են լրագրերը, իւր առաջին այցելութիւնը տալով Թուրքաց աւագանոյն՝ սկսել է իւր պաշտօնավարութիւնը։

Համագումար ժողով։

«Բիւզանդիոնում» կարդում ենք, որ փետրվարի 24-ին գումարուել է համագումար ժողովը, որ բաղկանում է Կ. Պոլիս գտնուող եպիսկոպոսներից, քարոզիչ վարդապետներից, աւագ երէցներից և աթոռակալներից։ Հրաւիրուած 55 եկեղեցականներից ներկայ են եղել 30-ը։ Ժողովին նախագահել է Տեղապահ Վահրամ արքեպիսկոպոսը, ատենապետել է կրօնական ժողովի ատենապետ Մաղաքիա եպիսկոպոս Տէրտէրեանը։ Սրբազան տեղապահը ժողովը բանալով յայտնել է, որ պսակադրութիւնների հասարակաց տեղերում կատարուելու դէմ առարկութիւններ են եղել և Կրօնական ժողովը հարկ է համարել Համագումար ժողովի նկատողութեան յանձնել, որ տրուած որոշումը ամեն կողմից ընդունելի և գործադրելի լինի։

Տաճկաստանում, առաջ, քաղաքային անտեղութիւններից խուսափելու համար պսակները տներում էին կատարում. Թուրքական սահմանադրութեան հրատարակումից յետոյ Կրօնական ժողովը թէև որոշել էր պսակները եկեղեցում կատարել, բայց շարունակում էին դարձեալ տներում և հասարակաց տեղերում պսակադրութիւնները։ Կարծիքների փոխանակութիւնից յետոյ ժողովը որոշեց, ի նկատի ունենալով Պոլսոյ վիճակը թոյլ տալ տներում ևս պսակադրութիւն՝ բայց բացարձակապէս արգելել հասարակաց տեղերում պսակադրութիւնը։